**Հավելված 6**
*ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-21/08* **ծածկագրով**
**գնանշման հարցման**

# ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N *ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-21/08*

ք.Թալին «23» օգոստոսի 2021թ.

Թալինի համայնքապետարան-ը ի դեմս համայնքի ղեկավարի Ժ/Պ Տավրոս Սափեյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Պրոֆ Ալ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է.Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3650200 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ՀՀդրամը, Գնորդըփոխանցումէ Վաճառողի բանկայինհաշվին՝ որպեսկանխավճար: Կանխավճարիմարումնիրականացվումէհանձնման-ընդունման արձանագրություններիհիմանվրակատարվողվճարումներիցնվազեցումներ (պահումներ) կատարելուձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողինվճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

---

[18] Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկըներկայացվելէառանցԱԱՀ-ի, ապապայմանագիրըկնքելիս «ներառյալԱԱՀ-ն» բառերըհանվումեն:

[19] Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույնկետըհանվումէնախագծից:

[20] Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու իմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 6/վեց էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Ք.Թալին Գայի 1
ՀՎՀՀ 05300705
Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական
վարչություն
Հ/Հ 900462151029

-------------------------Տ.Սափեյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Պրոֆ Ալ» ՍՊԸ
ք. Երևան, Գ1 թաղամաս Հ1
ՀՎՀՀ՝ 01831375
Հ/Հ՝ 217-001-164342-001
«Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» բանկ ՓԲԸ
Տնօրեն՝ Է. Ավետիսյան

-------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քանիինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ պուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| | | | | | | | | | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 1 | 39121200 | Ընդունարանի սեղան | | Ընդունարանի սեղան 2200(L)x850(D)x1100(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ PULVER 09038.09010 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանածածկերը 18 մմ հաստությամբ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Մալուխների համար պնցքերի մեջ՝ պլաստիկ դետալներով, մուգ մոխրագույն կամ սև: Դիմային ճակատից վերին և ստորին մասերում նախատեսված են երկշերտ | հատ | 176400 | 176400. | 1 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մետաղական ցանցեր՝ 10x10x2 քառակուսի խողովակներով և պղնձե կամ ներկված մանր Նուրբ ցանցով (բջջի չափը՝ 3-5 մմ): Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 2 | 39121200 | Սեղանիկ մեծ տպիչի համար | | Սեղանիկ մեծ տպիչի համար 1420(L)x850(D)x600(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ PULVER 09038.09010 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանածածկը և կողային ճակատները 18 մմ հաստությամբ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Մանրամասները ըստ գծագրի | հատ | 44400 | 44400 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 3 | 39151130 | 4 քաշովի դարակներով մոդուլ | | 4 քաշովի դարակներով մոդուլ 1220(W)x600(D)x500(H) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H1180 ST37 (Նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ | հատ | 57600 | 57600 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 4 | 39121200 | Գրասեղան | | Գրասեղան 1500(L)x850(D)x750(H) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ PULVER 09038.09010 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանածածկը 18 մմ հաստությամբ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Մալուխների համար անցքերի մեջ՝ պլաստիկ դետալներով, մուգ մոխրագույն կամ սև: Դիմային ճակատից նախատեսված է երկշերտ մետաղական ցանցեր՝ 10x10x2 մմ քառակուսի խողովակներով և պղնձե կամ ներկված մանր նուրբ ցանցով (բջջի չափը՝ 3-5 մմ): Մանրամասները ըստ գծագրի | հատ | 99000 | 594000 | 6 | Ք.Թալին Գայի 1 | 6 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 5 | 39121410 | Համակարգչի և փոքր տպիչի մոդուլ | | Համակարգչի և փոքր տպիչի մոդուլ 450(W)x650(D)x600(H) մմ: 20x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ PULVER 09038.09010 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Դարակները 18 մմ | հատ | 28800 | 115200 | 4 | Ք.Թալին Գայի 1 | 4 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաստությամբ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Մեկ նեղ ճակատից նախատեսված է միաշերտ պղնձե կամ ներկված մանր Նուրբ ցանցով (բջջի չափը՝ 3-5 մմ): 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 6 | 39151130 | 3 քաշովի դարակներով մոդուլ | | 3 քաշովի դարակներով մոդուլ 400(W)x530(D)x600(H) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կող՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Մանրամասները ըստ գծագրի | հատ | 39600 | 277200 | 7 | Ք.Թալին Գայի 1 | 7 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 7 | 39151130 | Հագուստի պահարան | | Հագուստի (ձախ դուռ) և թղթապանակների (աջ դուռ) պահարան 1000(W)x450(D)x2100(H) մմ, | հատ | 138000 | 138000 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 4 դռներով: Հիմնակմախքը և դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) տեսակի լամինատով, իսկ դռները Egger H1180 ST37 (Նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը` 156 մմ, կոդ` RQ104S.096BC99, Գույնը` սև, Վերջնամշակումը` խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Հագուստի 2 կետային կախիչներով | | | | | | | |
| 8 | 39151130 | Հագուստի պահարան | | Հագուստի (աջ դուռ) և թղթապանակների (ձախ դուռ) պահարան 1000(W)x450(D)x2100(H) մմ, 4 դռներով: Հիմնակմախքը և դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) տեսակի լամինատով, իսկ դռները Egger H1180 ST37 (Նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը` 156 մմ, կոդ` RQ104S.096BC99, Գույնը` սև, Վերջնամշակումը` խոզանակած պողպատ: 8H100 տեսակի | հատ | 138000 | 138000 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղ | | | | | | |
| 9 | 39132100 | Թղթապանակների պահարան | | Հիմնակմախքը և դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) տեսակի լամինատով, իսկ վերին դուռը Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) լամինատով: Ստորի նդուռը՝ ապակե, թափանցիկ, կողային ճակատները հղկված, եզրերը մշակված, անգույն կամ շատ բաց մոխրագույն պիգմենտով: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Ստորին դռան հետևում պահարանի հետևի պանելի մեջ բացվածքով՝ համակարգչային ցանցի switch-ի և հոսանքի վարդակների սպասարկման համար: Մանրամասները ըստ գծագրի Մանրամասները ըստ գծագրի | հատ | 78000 | 78000 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 10 | 39132100 | 2 քաշովի դարակներով Փաստաթղթերի | | 2 քաշովի դարակներով (ձախից), մեկ դռնակով (աջից) և բաց դարակով (վերևում) փաստաթղթերի պահարան | հատ | 75600 | 151200 | 2 | Ք.Թալին Գայի 1 | 2 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պահարան | | 1000(W)x450(D)x1100(H) մմ: Հիմնակմախքը և ներսի դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային նիստերը Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք): Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 11 | 39132100 | 2 քաշովի դարակներով Փաստաթղթերի պահարան | | 2 քաշովի դարակներով (աջից), մեկ դռնակով (ձախից) և բաց դարակով (վերևում) փաստաթղթերի պահարան 1000(W)x450(D)x1100(H) մմ: Հիմնակմախքը և ներսի դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային նիստերը Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք): Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք | հատ | 75600 | 226800 | 3 | Ք.Թալին Գայի 1 | 3 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ապրանքանիշ: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 12 | 39121200 | Սեղան փաստաթղթերի լրացման համար | | 2 քաշովի դարակներով (աջից), մեկ դռնակով (ձախից) և բաց դարակով (վերևում) փաստաթղթերի պահարան 1000(W)x450(D)x1100(H) մմ: Հիմնակմախքը և ներսի դարակները 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային նիստերը Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք): Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, գաբարիտային երկարությունը՝ 156 մմ, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ սև, Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 8H100 տեսակի կարգավորվող պրիզմայաձև ոտքերով, անփայլ մետաղական կանգնակ + մոխրագույն պլաստիկ | հատ | 66000 | 66000 | 1 | Ք.Թալին Գայի 1 | 1 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ոտնատակ: Մանրամասները ըստ գծագրի | | | | | | | |
| 13 | 39111140 | Աթոռ անիվներով | | Սպասարկողի աթոռ անիվներով, բարձրորակ մեխանիզմով, բարձրության և մեջքի հենակի անկյան կարգավորմամբ, նստատեղը կտորից: Դիզայնը ըստ նախագծում ներկայացված նկարի | հատ | 55000 | 385000 | 7 | Ք.Թալին Գայի 1 | 7 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
| 14 | 39121200 | Խորհրդատվական սեղանի աթոռ | | Յաճախորդի, սպասարկուհի / խորհրդատվական սեղանի աթոռ: Նստատեղի նյութը՝ պլաստիկ, գույնը՝ սպիտակ, ոտքերի նյութը՝ փայտ, գույնը՝ բաց երանգի: Բազկաթևերով: Դիզայնը ըստ նախագծում ներկայացված նկարի | հատ | 25000 | 200000 | 8 | Ք.Թալին Գայի 1 | 8 հատ | պայմ. կնքման օրվանից 20 օր |
